ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2020/60, 28.04.2020թ.

Բողոք բերող անձ՝ «ԿԱՋԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամ

Պատվիրատու՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-20/20» գնանշման հարցում

Գնման առարկան՝ Մասնագիտական ուսուցման ծառայությունների մատուցման ձեռքբերում

Բողոքի պահանջը՝ Պարտավորեցնել «ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-20/20» ծածկագրով գնանշման հարցամ ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չեղյալ համարել որոշումը և վերագնահատել Հիմնադրամի կողմից ներկայացրած 27-րդ չափաբաժնի մասով հայտը՝ հաշվի առնելով այն, որ ԿԳՄՍ նախարարության կողմից մոդուլային ծրագրի երաշխավորության հրամանը հաստատվել է սահմանված ժամկետներում, սակայն Հիմնադրամին ներկայացվել է ավելի ուշ:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ. ԱՆԱՆԻԿՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ հղումով.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,
- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

«ԿԱՋԱ» ՇՎԵՅՑԱՐԱԿԱՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
KASA FONDATION HUMANITAIRE SUISSE

KOMITAS ACTION SUISSE - ARMÉNIE

Թումանյան 24, բն.5, 0001 Երևան Հայաստան
24, rue Toumanian, apt.5, 0001 Erévan Arménie
+374 10 58 40 32
kasaam@kasa.am / www.kasa.am

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձին

ք. Երևան, ապրիլի 28, 2020թ.

Բողոք

Հայտնում ենք, որ 2020 թվականի մարտի 19-ին «ԿԱՋԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ) մասնակցել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (հասցե՝ ՀՀ ք. Երևան 0010, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3) ենթակայությանը հանձնված կազմակերպությունների կարիքների համար՝ մասնագիտական ուսուցման ծառայությունների մատուցման նպատակով հայտարարած գնանշման հարցմանը, ընթացակարգի ծածկագիր՝ ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-20/20: Ընթացակարգի սահմանված կարգով, ի թիվս այլ ընկերությունների, Հիմնադրամը մասնակցել է էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով հայտարարված գնանշմանը՝ դիմելով «Դայակ» մասնագիտությամբ ուսուցում ք. Գյումրիում՝ թիվ 27 չափաբաժնի մասով (հավելված 1):

Ըստ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում,

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Ընթացակարգի սահմանված կարգով, որպես ընտրված մասնակից, ընթացակարգը գնահատող հանձնաժողովի կողմից սահմանվել է հետևյալը. 15 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից (այսուհետ՝ ԿԳՄՍ) տրամադրվող «Դայակ» մասնագիտությամբ ուսուցման ծրագրի երաշխավորությունը, որպես լրացուցիչ կրթության մոդուլային ծրագիր:

Համաձայն ընթացակարգի հրավերի ՄԱՍ 3-ի՝ ՀՀ կառավարության 17.04.2014թ.-ի N 534-Ն որոշման հավելված 11-ի 7, 7.1, և 7.2 կետերով սահմանված պահանջներին համապատասխան՝ մասնագիտական ուսուցման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերով սահմանվում է, որ բոլոր մասնակիցները հայտով ներկայացնում են նաև մոդուլային ծրագրի նախագիծ, իսկ այն մասնակիցները, որոնք արդեն իսկ ունեն ՀՀ կառավարության 2015թ. սեպտեմբերի 10-ի «Լրացուցիչ կրթական ծրագրերի կազմակերպման և իրականացման կարգը, ինչպես նաև ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման արդյունքների գնահատման և ճանաչման կարգը սահմանելու մասին» N 1062-Ն որոշմամբ հաստատված կարգի 15-րդ կետի համաձայն երաշխավորված՝ մասնագիտական ուսուցման տվյալ դասընթացն ապահովող մոդուլային ծրագիր՝ ներկայացնում են այդ ծրագիրը և ՀՀ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից դրա վերաբերյալ տրված երաշխավորագիրը:

Սահմանված ժամկետներում, գնանշման հայտին դիմելուց առաջ, 2020 թվականի մարտի 16-ին ուսուցման մոդուլային ծրագիրը Հիմնադրամի կողմից համապատասխան գրությամբ ուղարկվել է ՀՀ ԿԳՄՍ՝ «Գործազուրկների, աշխատանքից ազատման ռիսկ ունեցող, ինչպես նաև ազատազրկման ձևով պատիժը կրելու ավարտին վեց ամիս մնացած աշխատանք փնտրող անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպում ծրագրի շրջանակներում «Դայակ» մասնագիտության զբաղմունքի ուսուցման լրացուցիչ կրթության մոդուլային ծրագիրը, ըստ «Լրացուցիչ կրթական ծրագրերի կազմակերպման և իրականացման կարգի» ՀՀ կառավարության 10.09.2015թ. թիվ 1062-Ն որոշման 15-րդ մասի, մասնագիտական եզրակացություն և երաշխավորություն ստանալու նպատակով» (հավելված 2):

Ի պատասխան վերը նշված գրության՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարի կողմից 10.04.2020թ. որոշում է կայացվել Հիմնադրամի կողմից ներկայացված մասնագիտական ծրագիրը երաշխավորել որպես լրացուցիչ կրթության մոդուլային ծրագիր մինչև 2023 թվականը (հավելված 3): Սակայն տեխնիկական խնդիրների և երկրում հայտարարված արտակարգ դրության ռեժիմում աշխատող նախարարության գերծանրաբեռնվածության հետևանքով երաշխավորության հրամանը փոխանցվել է Հիմնադրամին հրամանի ստացման օրվանից ուշ, այնուհետև ներկայացվել գնահատող հանձնաժողովի քարտուղարին: Արդյունքում, ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.04.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ Հիմնադրամի «ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-20/20» ծածկագրով հայտը մերժվել է հրավերի մաս 3-ով սահմանված՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից երաշխավորված մոդուլային ծրագիր չներկայացնելու և հրավերով սահմանված ժամկետում անհամապատասխանությունը չշտկելու հիմքով (հավելված 4):

Հիմք ընդունելով վերոգրյալ տեխնիկական խնդիրները և Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետը, որի համաձայն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման,

գ. փոփոխելու ընդունված որոշումները,

խնդրում ենք պարտավորեցնել ԱՍՀՆ-ԳՀՇՁԲ-20/20 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չեղյալ համարել որոշումը և վերագնահատել Հիմնադրամի կողմից ներկայացրած 27-րդ չափաբաժնի մասով հայտը՝ հաշվի առնելով այն, որ ԿԳՄՍ նախարարության կողմից մոդուլային ծրագրի երաշխավորության հրամանը հաստատվել է սահմանված ժամկետներում, սակայն Հիմնադրամին ներկայացվել է ավելի ուշ:

Հարգանքով՝

Հիմնադրամի տնօրեն՝ Տաթևիկ Բաղդասարյան